

Գավիթ Վ. Պետրոսյան  
Բանաս. գիտ. դոկտոր

## ՄԻՖԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԱՆԻ ԷՍՏԵՆԵՐՈՒՄ\*

**Միֆական մտածողությունը** Մ. Գալշոյանի ստեղծագործության մեջ առանցքային դեր ունի, ուստի բնական է նրա առկայությունը ոչ միայն հեղինակի գեղարվեստական, այլև հրապարակախոսական գործերում: Իր ակնարկներում, էսսեներում Գալշոյանը, բովանդակային ու թեմատիկ նպատակադրումից ելնելով, հաճախ է տրվում միֆաստեղծման մոտիվներին, որոնք նրա հրապարակումներից շատերում ի հայտ են բերում միֆական-գեղագիտական կառույցի մի շարք ուշագրավ կողմեր: Հողվածի նպատակը այդ կառույցի հիմնարար բաղադրիչներից մեկի՝ միֆական ժամանակի ընկալման և պատկերման խնդրի քննությունն է գրողի երեք՝ «Ագռավաքար», «Լուսավորչի կանթեղը» և «Ու՞ր, ծերուկ» էսսեներում:

«Միֆական ժամանակ»<sup>1</sup> հասկացությունը 20-րդ դարի տեսական-փիլիսոփայական հետազոտություններում դիտվում է իբրև ժամանակային պատկերացումների բարդ համակցություն, որն անմիջականորեն կապված է միֆական աշխարհընկալման հետ: Կյանքի փիլիսոփայական իմաստավորումը, բնագիտական միտքը, սկզբնավորվելով միֆոլոգիական մտածողությունից, աշխարհայեցողության նոր որակներ հայտնաբերեցին, բայց դրա հետ մեկտեղ միֆական աշխարհընկալումը շարունակեց գոյատևել: Այն առանձնապես ակտիվ դրսևորումներ ունի գեղարվեստական, հրապարակախոսական մտքի շրջանակներում՝ իբրև հիմք ունենալով միֆական ժամանակի և տարածության գեղագիտական հարթությունները:

Մուշեղ Գալշոյանի էսսեները, միֆական ժամանակի հետ կապված, վերլուծության լայն տարածքներ են բացում: Առաջին հայացքից դրանք ուղեգրության տպավորություն են թողնում. հեղինակը՝ իբրև թղթակից, մեկնում է Խորհրդային Հայաստանի տարբեր շրջաններ, հետևում հայ մարդու աշխատանքային գործունեությանն ու առօրյային, խորհրդային կյանքում տեղի ունեցող իրադարձություններին: Բայց սա միայն կեղևն է. խորքում, ֆիզիկական ժամանակին զուգահեռ,

\* Հողվածն ընդունվել է տպագրության 30.04.2011:

1 Տե՛ս մասնավորապես “Мифы народов мира”, энциклопедия, т. 1, М., 1991, К. Леви-Стросс, Структурная антропология, М., 2001, Л. Леви-Брюль, Сверхестественное в первобытном мышлении, М., 1994, Э. Кассирер, Философия символических форм, т. 2, Мифологическое мышление, М., СПб, 2001, М. Элиаде, Аспекты мифа, М., 1994, Е. Мелетинский, Поэтика мифа, М. 1976 և այլ աշխատություններում:

գրողը հյուսում է հայոց աշխարհի և հայ մարդու միֆական ժամանակը: Վերնագրերում արդեն առկա են առաջին ազդանշանները՝ «Ազոավաքար», «Լուսավորչի կանթեղը», որոնցում միֆական ժամանակի հիմնարար բաղադրիչներից առաջնայինը **ժամանակությունից դեպի անժամանակություն** անցման խնդիրն է: Բանն այն է, որ վաղ միֆոլոգիական մտածողությամբ օժտված մարդը չէր տրոհում ժամանակի տևականությունը, չէր տարանջատում այն **անցյալի, ներկայի և ապագայի**, ուստի այդ գիտակցությունը ձեռք է բերվել ավելի ուշ: Նրա մոտ ձևավորվում էր իրականության **անժամանակային** ընկալում, որի պարագային այն, ինչ տեղի էր ունեցել անցյալում և պահպանվել էր հիշողության մեջ, չէր դառնում անցյալ, այլ շարունակում էր գոյատևել ներկայում կատարվող իրադարձությունների հետ միաժամանակ<sup>2</sup>: Միֆական ժամանակը բխել է այս ակունքներից և իր մեջ պահել վերջիններիս բնորոշ անժամանակությունը: Ուստի վանելով իրենից ֆիզիկական ժամանակը՝ մարդը միֆի, միֆական ժամանակի միջոցով սահուն կերպով վերամարմնավորում էր ներկա-անցյալ-ապագա փոխակերպումները, ըստ էության, դառնալով միֆական անժամանակության կրող:

Գալշոյանի էսսեներից հատկապես «Ազոավաքար»-ում անցումը ժամանակությունից դեպի անժամանակություն իրականացվում է առաջին հերթին՝ **հոգևոր ժամանակի** միջոցով, որտեղ նույն տարածության վրա են անցյալը, ներկան և ապագան, և որտեղ գլխավորը հոգու շարժումն է հիշողության ուղեկցությամբ: Ըստ այդմ՝ միֆական ժամանակի բնորոշ հատկանիշներից մեկը նրա հոգեբանորեն հագեցած լինելն է<sup>3</sup>: Այս իրողությունը միավորում է ժամանակային երեք չափումները՝ նորովի բացահայտելով անժամանակության ներքին էությունը:

«Ազոավաքար»-ում ցավով նկարագրելով Սյունյաց աշխարհի հայաթափվող գյուղերի աղետալի վիճակը, Գալշոյանը տեղափոխվում է դարերի խորքը: Միֆական պատումին բնորոշ շնչով նրա առջև հառնում է Սյունյաց Անդոկ իշխանի որդի Բաբիկի կերպարը, որը մեծ փորձությունների գնով կարողանում է վերստին տիրանալ Միսական ցեղի երկրին. «Հա՛, Բաբիկը ճգնավոր սարի կարոտից մեմնակ դուրս եկավ Շապուհի՛ ահեղ թշնամու դեմ, իսկ Կոլյան իր կարոտից՝ ճգնավորին տեր կանգնելուց ամաչում է<sup>4</sup>»: Հոգեբանական ժեստն ակնհայտ է. հեղինակին անցյալի ներկայությունը խիստ ցանկալի է: Նա փորձում է ապավինել հայ առնական տղամարդու **արքետիպին**: Վերջինիս գոյությունը, նախահայրերից սկսած, տևականորեն առաջնորդել է Սյունյաց տերերին: Ողբերգությունը արքետիպային կորի անկումն է, մեր օրերում՝ «ճգնավոր սարին տեր կանգնելուց ամաչելը»:

Գալշոյանը նման ուշագրավ գուգահեռներ է ստեղծում նաև «Ու՞ր, ծերուկ» էսսեում: Այս անգամ ժամանակային հարթությունները կողք կողքի են դրվում Գլաճորի համալսարանի առնչությամբ: Երևանցի հյուրերից լսելով համալսարանի ուսուցչապետ Ներսես Մշեցու անունը՝ գլաճորցի Օգսենը նրանց ուղեկցում է գյուղի տարեցներից մեկի՝ Ներսես Մշեցու տուն: Վերջինս իր ողջ կյանքն անցկացրել է քրդերի մեջ, հայերեն չի խոսում, չգիտի այբուբենը. «Էդ ո՞նց է պատահել, որ, է՛, 1279 թվականին քո հայրենակիցը, քո անվանակիցը, գուցե քո հոր, հոր, հոր...հորեղբոր տղան՝ Ներսես Մշեցին, Առաքելոց վանքից ելել, եկել է Վայոց

2 Տե՛ս Ի. Ա. Хасанов, Время: Природа, равномерность, измерение, М., «Прогресс- традиция», 2001, с. 20.

3 Տե՛ս там же, с. 22.

4 Մուշեղ Գալշոյան, Ազոավաքար, էսսեներ, ակնարկներ, հոդվածներ, Եր., «Հայաստան», 1990, էջ 60:

ծոր, Ադրերց վանք, ընդունել Պռոշյան իշխանի պատիվն ու համալսարանի «ռեկտորի» պաշտոնը, իսկ դու, 1966 թվականի Ներսես Մշեցի, նոր, նոր սովորում ես, որ սարին սար են ասում...»<sup>5</sup>: Վտանգված է ծերունու՝ իմաստունի արքետիպը. նոր ժամանակների հողմերը ավերել են նրա ներսում գոյության, ավելի լայն առունով՝ ազգային հոգեմտավոր գոյության տարածքը:

Էստեներում միֆական ժամանակի դրսևորման ձևերն առավել ակնհայտ են դառնում, երբ դրանք դիտարկում ենք միֆական տարածության հետ փոխկապակցվածության մեջ: «Գրական-գեղարվեստական խրոնոտոպում (ժամանակատարածություն-Գ.Պ.) տարածական և ժամանակային նշանները միահյուսվում են իմաստավորված և կոնկրետ ամբողջի մեջ,- գրում է Մ. Բախտինը: - Ժամանակն այստեղ խտանում, թանձրանում և դառնում է գեղարվեստորեն տեսանելի. տարածությունն իր հերթին լարվում, ներառվում է ժամանակի, սյուժեի, պատմության շարժման մեջ»<sup>6</sup>:

Ռուս գրականագետի նշած գեղարվեստական **խրոնոտոպ** ընդհանրության շատ եզրեր ունի միֆական ժամանակի ու տարածության հետ: «Ազգավաքար»-ում այդ տարածությունը Մյունխյաց աշխարհն է, «Լուսավորչի կանթեղ»-ում՝ Արագած լեռն ու նրան հարակից շրջանները: Այս ստեղծագործություններում տարածությունը միֆական է դառնում հիմնականում ժամանակի բազմաչափ կիրառության շնորհիվ, ինչը բնորոշ է միֆական ժամանակին: Մասնավորապես՝ «Ազգավաքար»-ում տարածքը (Մյունխյաց աշխարհը) նախ՝ օժվում է աստվածաշնչյան ծննդաբանության ոգով, այնուհետև գրողի հայացքը հեռանում է ժամանակագրական միագիծ ընթացքից, ինչի արդյունքում խախտվում է դարերի հերթագայությունը՝ «հնազանդվելով» գրող-ասացողի ստեղծած միֆական պատումի տրամաբանության ընթացքին: Ընթերցողը հայտնվում է 20-րդ դարասկզբին, ապա տեղափոխվում Մյունիքի վրա Լենկթեմուրի կատարած արշավանքի ժամանակները, քիչ հետո հեղինակի հետ վերադառնում 18-րդ դար (Բարայել Օրի, Դավիթ-Բեկ), այնուհետև նորից հեռանում դարերի խորքը՝ Մյունխյաց Անդոկ իշխանի և նրա Բաբիկ որդու պատմությունն ունկնդրելու համար, և այսպես շարունակ: Այս հնարանքի միջոցով Գալշոյանը նույն տարածության վրա կիրառում է բանահյուսական պատումի՝ միֆական ժամանակին բնորոշ պարբերական (ցիկլային) կրկնությունները: Ըստ այդմ՝ անցյալը շարունակ ներկայանում է, այսինքն՝ կայանում է իբրև ներկա, և յուրաքանչյուր նոր պատմություն վերստին հաստատում է Միսական ցեղի անխզելի կապը լեռնաշխարհի հետ:

Արգենտինացի գրող Խորխե Լուիս Բորխեսի խոստովանությամբ՝ ժամանակային երեք հատվածներից «ամենաբարդը, ամենաանորսալին ներկան է»<sup>7</sup>: Ասվածը համահունչ է Գալշոյանի մտորումներին, քանի որ «Ազգավաքար»-ում անմիջական կամ իրական ներկան հեղինակին շարունակ կանգնեցնում է բարդ իրավիճակների առաջ: Նա ստիպված ապավինում է միֆական մտածողությանը, որը, կապված ժամանակի և տարածության հետ, բավականին ճկուն է: Գալշոյանի էստեներում ոչ միայն միֆական ժամանակն է դրսևորվում իր բազում չափումներով, այլև միևնույն ժամանակի մեջ ի հայտ են գալիս տարածական տարբեր չափումներ, ինչը նոր երանգներ է հաղորդում նյութի բովանդակային կողմին:

5 Նույն տեղում, էջ 119:

6 М. М. Бахтин, Вопросы литературы и эстетики, М., Худож. лит., с. 234.

7 [www.chronos.msu.ru/nameindex/borhez.html](http://www.chronos.msu.ru/nameindex/borhez.html)

Այս առումով բնորոշ են հին և նոր Խնձորեսկ գյուղերի պատմությունը «Ազոավաքար»-ում և Արտենի սարի լանջին հնագիտական պեղումների ու ճանապարհաշինարարական աշխատանքների մասին հիշողությունները «Լուսավորչի կանթեղ»-ում: Այս անգամ միֆական է դառնում տարածությունը, որը հերոսական ու էպիկական է անցյալի ներկայությամբ: Հետաքրքիր է, որ հին Խնձորեսկն ընդհանրացնող պատկերների մեջ Գալշոյանն անակնկալ ներմուծում է մեր ազգային էպոսի երկու նվիրական խորհրդանիշերը՝ Քուռկիկ-Ջալալին և Ազոավաքարը, որոնք «խուլ վրնջում են դարերի հիշատակը»<sup>8</sup>:

Նույն ժամանակի մեջ գործող երկու տարածության ուշագրավ պատկերներ են Արտենի սարի վերին և ստորին լանջերը՝ «Լուսավորչի կանթեղ»-ում: Եթե «Ազոավաքար»-ում հին Խնձորեսկը ներքևում է՝ ձորի մեջ, ապա «Լուսավորչի կանթեղ»-ում միֆական տարածությունը վերևում է, ուր հնագիտական արշավախումբը պեղում է «Խորհրդային Միության տերիտորիայում գտնվող ամենահնագույն օջախը»<sup>9</sup>: Երկու դեպքում էլ աչքի է զարնում ընդհանուր մի գիծ. միֆական տարածության մեջ ժամանակը, շարժումը, գործողություններն ընթանում են դանդաղ, ի տարբերություն այն տարածքի, որտեղ իրական ժամանակն է՝ իրեն բնորոշ գործողությունների արագ ընթացքով: Կարևոր մի յուրահատկություն ևս. և՛ «Ազոավաքար»-ում, և՛ «Լուսավորչի կանթեղ»-ում հերոսների հոգեբանության, նրանց պահվածքի միջոցով նկատելիորեն ընդգծված է **վերին և ներքին տարածքների հակադրությունը**: Սակայն տարածության մեջ իմաստավորված այդ հակադրությունը խզում չի առաջացնում, քանի որ ժամանակային առումով (անցյալից՝ ներկա, ներկայից՝ անցյալ) հաստատում է ազգի գոյատևման շարունակականությունը:

Միֆական ժամանակն իր ինքնատիպ դրսևորումներով բացահայտվում է նաև Գալշոյանի հերոսների ներաշխարհում: Լավագույն վկայությունը «Ու՞ր, ծերուկ» էստեն է: Գրողն այն ստեղծել է ժամանակը կերպավորող Ծերուկի և իր հերոսների երկխոսության հենքի վրա: Անհատի հոգևոր աշխարհում ժամանակին տրվող բնութագրումները հիմնականում միֆական երանգավորում են ստացել. «Էդ անտեր ժամանակն ու երաժշտությունը ոնց որ նույն մարմինն ունեն»<sup>10</sup>, - փիլիսոփայում է էստեի հերոսներից Մաեստրոն: Երաժշտության խորհրդավորությունը ժամանակի հետ հաղորդակցելով՝ Գալշոյանը դրանով վերջինիս գոյությունը տեղափոխում է **անժամանակություն**, ինչը բնորոշ է միֆական ժամանակին:

Եթե իրական աշխարհում տարածությունը հիմնականում կոնկրետ է և միֆականում է ժամանակի **բազմաչափ ընկալման** շնորհիվ, ապա հոգևոր աշխարհում ինչպես ժամանակը, այնպես էլ տարածությունը սահմաններ չունեն: Նույն էստեի մեկ այլ հերոս՝ Արտակը, հետևյալ կերպ է բնութագրում արդեն պատմություն դարձող հին տարին. այն «կդառնա պղնձե ձուլվածք. թե՛ ձեռք չտաս՝ անծպտուն կմնա, և դա կլինի ժամանակ ժամանակի մեջ, մատ դիպցնես՝ ծլնագոյով արձագանք կտա, և դա կլինի ժամանակ ժամանակից դուրս...»<sup>11</sup>: «Ժամանակի մեջ» և «ժամանակից դուրս»,-սրանք արդեն հոգևոր տարածության միֆականացված արտահայտություններն են:

8 Մուշեղ Գալշոյան, Ազոավաքար..., էջ 14:

9 Նույն տեղում, էջ 91:

10 Նույն տեղում, էջ 115:

11 Նույն տեղում, էջ 116:

Գալշոյանի էստեներում տարաբնույթ դրսևորումներ է ստացել միֆական անժամանակությունը խորհրդանշող մեկ այլ գործառույթն է: Այն տեսական գրականության մեջ մեկնաբանվում է իբրև «վերադարձ ակունքների»: Ըստ այդմ՝ ժամանակը ցիկլային (պարբերական) բնույթ ունի, և աշխարհի ընթացքը միֆոլոգիական գիտակցության մեջ ընկալվում է որպես շարունակ վերադարձող ու կրկին կատարվող **արքետիպային ակտ**, որն ամեն անգամ նորովի է դրսևորվում<sup>12</sup>: Այդ արքետիպային ակտի փոքրագույն արտահայտություններից մեկը Նոր տարին է: Այն՝ իբրև տիեզերաստեղծման հարացույցի մանրակերտ, ունի իր սկիզբն ու վերջը: Յուրաքանչյուր հին տարվա ավարտ նախանշում է նոր տարվա ծնունդը, և այդ թարմացումը կարծես մի նոր արարչագործություն է, որ իրականացվում է տիեզերաստեղծման հարացույցին համապատասխան<sup>13</sup>: Ուստի Նոր տարվան նվիրված արարողությունները հիշեցնում են վերադարձն ակունքների, այսինքն՝ վերածնունդը միֆական այն ժամանակի, երբ իրերն ու երևույթները ստեղծվում էին առաջին անգամ: Եվ այս առումով Տիեզերքն, ըստ ռումինացի հետազոտող Միրչա Էլիադեի, «իդեալական արքետիպ է բոլոր ստեղծագործ վիճակների և ցանկացած ստեղծագործության համար»<sup>14</sup>:

Գալշոյանի «Ռ՞ւր, ծերուկ» էստեում ժամանակի հետ գրույցն ընթանում է հին և նոր տարվա սահմանագծին: Հեղինակն այդ գրույցը դարձնում է ստեղծագործական յուրօրինակ խաղ՝ հռետորական իր հարցումներով մեկ անգամ ևս ընդգծելով միֆական ժամանակի անժամանակությունը. «Ամեն քայլիս հետ ծերացող տարին ավելի է ծերանում, սողալով փախչում է ոտնատակից, բայց զգում եմ, որ դա էլ խաբեություն է՝ մի գիշերվա մեջ ատամները կփոխի, ետ կգա»<sup>15</sup>:

Վերադարձն ակունքներին միֆական շնչով է պատկերված հատկապես «Ազոավաքար»-ում, որի սկիզբն ու վերջը միֆական ժամանակի կառույց են հիշեցնում. սկսվում է Միսական ցեղի ծննդաբանությամբ՝ «Հաբեթը սերում է Գամերին: Գամերը սերում է Թիրասին: Թիրասը սերում է Թորգոմին...»<sup>16</sup> և ավարտվում այդ նույն ցեղի վախճանը ահազանգող քառասյին երազով. «Հա՛, հա՛, հա՛, հա՛, -քրքջում է, հետո պտղունցով առնում է մի **սաստկած** մեղու,-բա սա կծո՞ղ է,-ասում է ու շարտում իմ եկած ճամփի ուղղությամբ,-Թելու՛նց, արի, քո մեղուն տար,- ու քրքջում է...»<sup>17</sup>: Երազը խորհրդանշում է իրական ժամանակը՝ «բարդ ու անորսալի ներկան», որի մեջ ավարտվում է միֆական ժամանակը:

Մի դեպքում՝ ակունքը սկիզբն է, մյուս դեպքում՝ ավարտը, իսկ միֆական ժամանակի մեջ յուրաքանչյուր ավարտ նոր սկիզբ է նշանավորում: Եվ այսպես՝ վերադարձը ակունքներին, ինչպես արդեն նշեցինք, հատկանշվում է իր պարբերական կրկնելիությամբ: Դրա վկայությունը աշխարհի ստեղծման և վախճանի մասին տարբեր ժողովուրդների մեջ հայտնի միֆերն են: Սրանց ստեղծման մոտիվը շարժում է. ըստ Մ. Էլիադեի՝ նույնիսկ աշխարհի կործանումը գուշակող վախճանաբանական պատմություններում կարևորը «ոչ թե աշխարհի վերջն է, այլ հավատը նոր սկզբի հանդեպ: Եվ այս վերականգնումն ըստ էության բացարձակ սկզբի, այսինքն՝ տիեզերաստեղծման կրկնությունն է»<sup>18</sup>:

12 Տե՛ս Ի. Ա. Хасанов, Время: природа, равномерность, измерение, с. 22.

13 Տե՛ս Мирча Элиаде, Аспекты мифа, М., 1994, с. 44.

14 Там же, с. 36.

15 Մուշեղ Գալշոյան, Ազոավաքար..., էջ 122:

16 Նույն տեղում, էջ 3:

17 Նույն տեղում, էջ 73:

18 Мирча Элиаде, Аспекты мифа, с. 81.

Այն փաստը, որ Գալշոյանն իր էսսեները սկսում է «Ագռավաքար»-ով և ավարտում «Ու՞ր, ծերուկ»-ով, խորհրդանշական բացատրություն ունի, եթե հարցը դիտարկում ենք միֆական ժամանակի տեսանկյունից: Չուզահեռ տանելով վերջին էսսեի և Նոյի մասին աստվածաշնչյան հայտնի պատմության միջև՝ նկատում ենք հետևյալը. տապանի մեջ նստած նահապետը հարց է հղում դրսի աշխարհին՝ սպասելով պատասխանի (ագռավի, ապա աղավնու միջոցով): Դրանով քաղաքակրթական նոր սկզբին նախորդում է սպասումը: Գուցե ենթագիտակցական ներքին մղումն է ուղեկցել Գալշոյանին՝ իր վերջին էսսեի վերջին տողերը եզրափակելու նույն սպասման խորհրդով. « Ծերուկ, ո՞ւր ես գնում, սպասիր հասկանանք իրար: Չե՞ս ասի, Ներսես Սշեցու՞ն ես շուտ հանդիպել, թե՞ Սշեցի Ներսեսին: Ի՞նչ խորհուրդ կտաս. Փառե մարեին ո՞նց նկարենք»<sup>19</sup>:

Այսպիսով, Մուշեղ Գալշոյանի էսսեներում միֆական ժամանակն իր վրա է վերցրել ոչ միայն առօրյա նյութի ոգեղինացման, այլև ազգային գոյության դարավոր ընթացքը հավերժին հաղորդակցելու հիմնական ծանրությունը, իսկ տեքստային ճկուն անցումները մեկ անգամ ևս փաստում են պլատոնյան հայտնի ձևակերպումը. «Ժամանակը հավերժի շարժուն պատկերն է»: «Ագռավաքար», «Լուսավորչի կանթեղը» և «Ու՞ր, ծերուկ» էսսեները դարձան յուրօրինակ նախադրու տաղանդավոր գրողի գեղարվեստական պատկերամտածողության համար, որը հետագայում լավագույնս դրսևորվեց «Մարութա սարի ամպերը» ժողովածուում:

## Summary

### THE MYTHICAL PERIOD IN THE ESSAYS BY MUSHEGH GALSHOYAN

Davit V. Petrosyan

The mythical period, one of the core ingredients of the mythical aesthetic structure, has received prominent expression in the three essays by Mushegh Galshoyan: “Crow Stone,” “The Torch of the Illuminator,” and “Where Are You Going, Old Man?”

With this objective in mind, the article examines one of the core understandings, which is specific to the mythical period and which is described as a transmission from timeliness to untimeliness. Thereby, a number of distinctive features of the inner world, which was specific to the spiritual time period, of Mushegh Galshoyan’s heroes are revealed.

There are a number of interesting parallels in the essays between mythical time and space, thanks to which different periods of time are revealed on the same plane and uncover new areas of mythical untimeliness.

The period, cyclical repetitions of time have also found their unique personification in myths. In this context, M. Galshoyan’s thinking goes back to the creative origin and finds parallels with the mythical period typical with the telling of the Bible.

The writer’s literary search in these essays clearly laid the foundation for the birth of his collection, “The Clouds of Mount Marouta.”

<sup>19</sup> Մուշեղ Գալշոյան, Ագռավաքար..., էջ 122: